ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

AMERICAN UNIVERSITY OF ARMENIA

ՏԱՍՆԱՄՅԱԿԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈ

Շաբաթ, հոկտեմբերի 6-ին, ժամը 17-ին
ՀԱՀ-ի մեծ դահլիճում

2001 թվական

ԾՐԱԳԻՐԸ

ՇՔԵՐԹ Էդվարդ Էլգար, *«Հանդիսավոր շքերթ»*	Հայաստանի և Ամերիկայի Միացյալ Նահանգների դրոշները Համալսարանի դրոշը Դասախոսական կազմը 2001 թվականի շրջանավարտները Համալսարանի նախագահը Քոլեջների դեկանները
ԱԶԳԱՅԻՆ ՕՐՀՆԵՐԳԵՐ	*<<Մեր Հայրենիք>>* *<<Աստղազարդ դրոշ>>*
ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ	Տեր Նավասարդ եպիսկոպոս Կճոյան
ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ	Դր. Հարություն Արմենյան *համալսարանի նախագահ*
ՏԱՍՆԱՄՅԱԿԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ	Պրն. Ռոբերտ Քոչարյան *Հայաստանի Հանրապետության նախագահ*
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔ	Դր. Էդվարդ Ղազարյան *Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար*
ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ	Դր. Միհրան Աղբաբյան *համալսարանի հիմնադիր և պատվավոր նախագահ*
ՈՒՂԵՐՁ ՀԱՀ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՑ	Դր. Յուրի Սարգսյան *Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի ռեկտոր*

ՀԱՀ-Ի ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔ

ԵՋՐԱՓԱԿԻՉ ԽՈՍՔ	Դր. Հարություն Արմենյան *համալսարանի նախագահ*
ՖԻԼՄԻ ՇՆՈՐՀԱՆՈՒԹՅՈՒՆ	*<<ՀԱՀ - Նվաճումների տասնամյակ>>*

Տեղեկություններ Հայաստանի ամերիկյան համալսարանի մասին

1991 Համալսարանը իր դռներն է բացում Հայաստանի անկախության հռչակման օրը՝ անգլերենի արագացված ուսուցման ծրագրի 101 ուսանողների առաջ: Մի քանի ամիս հետո այս ուսանողները ընդունվում են իրենց նախընտրած՝ գործարար ղեկավարման, սեյսմակայուն ճարտարագիտության և արդյունաբերական ճարտարագիտության մագիստրոսի կոչման ծրագրերում սովորելու:
◆ Ներկայումս գործարար ղեկավարման դպրոցը առաջարկում է գործարար ղեկավարման մագիստրոսի կոչում շնորհող ծրագիր, որը նախատեսված է օգնելու ապագա գործարար ձեռնարկատերերին, մասնավոր ձեռնարկությունների ղեկավարներին և կառավարության պատասխանատու աշխատակիցներին ազատ և արդյունավետ գործելու գլոբալ մրցակցային միջավայրում: Արդյունաբերական ճարտարագիտության և համակարգային կառավարում ծրագիրը կոչված է մասնագետներ պատրաստել արդյունաբերական արտադրության և կառավարման, նախագծման, տնտեսական վերլուծության, տեղեկատվական համակարգերի/տեղեկատվական տեխնոլոգիաների, հուսալիության և որակի ապահովման, համակարգերի վերլուծության և ժամանակակից արտադրական ոլորտներում:

1992 Բացվում են մի շարք հետազոտական ծրագրեր: Այդ թվում՝ շրջակա միջավայրի պահպանման և հետազոտության կենտրոնը, որը բոլոր առաջին կուրսի ուսանողներին առաջարկում է շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ ներածական դասընթաց: Կենտրոնը առաջարկում է վկայագիր շնորհող ծրագիր երկրորդ կուրսի այն ուսանողներին, որոնք ցանկանում են ներառել նաև շրջակա միջավայրի հետազոտությունը իրենց ուսուցման ընթացքում:
◆ Իր աշխատանքներն է սկսում ճարտարագիտական հետազոտությունների կենտրոնը: Այն հետազոտություններ է անցկացնում ինչպես արդյունաբերական ճարտարագիտության, այնպես էլ նորացվող էներգիայի բնագավառներում:
◆ Ստեղծվում է <<Անգլերենի դասավանդումը որպես օտար լեզու>> վկայագիր շնորհող ծրագիրը՝ Հայաստանում անգլերեն դասավանդող ուսուցիչների պատրաստման համար:
◆ Գործարար կառավարման քոլեջի կողմից ձեռնարկվում է գործարար հետազոտությունների և զարգացման կենտրոնը:
◆ Ստեղծվում է ՀԱՀ-ի հատուկ դասընթացների բաժինը: Այն կարճատև դասընթացներ և ուսուցման ծրագրեր է առաջարկում ինչպես Երևանում, այնպես էլ շրջաններում աշխատող մասնագետների համար:

1994 Հիմնադրվում է քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների քոլեջը, որն առաջարկում է քաղաքագիտության մագիստրոսի կոչում: Այս ծրագրի նպատակն է ուսանողներին ապահովել գիտելիքներով և վերլուծական կարողություններով, որոնք անհրաժեշտ են հանրային և ոչ պետական սեկտորներում որպես վարչական աշխատողներ դիվանագետներ, վերլուծաբաններ, հետազոտողներ, և հարակից բնագավառների արհեստավարժ մասնագետներ արդյունավետ գործելու համար:

1995 Զոնս Հոփկինս համալսարանի՝ Բլումբերգ հանրային առողջապահության բաժնի աջակցությամբ սկսվում է հանրային առողջապահության ծրագիրը որպես վկայագիր շնորհող դասընթաց, որին զուգընթաց սկսում է գործել առողջապահական ծառայությունների հետազոտական կենտրոնը՝ ապահովելով տեխնիկական օգնություն, հետազոտություն և ծրագրային զարգացման օժանդակություն ՀՀ Առողջապահության նախարարությանը, միջազգային մարդասիրական և դոնոր կազմակերպություններին: Հայաստանի և տարածաշրջանի առողջապահական համակարգի զարգացմանն ուղղված նախագծերի մասնակցության միջոցով ուսանողները ունենում են նաև գործնական ուսուցման հնարավորություններ:
◆ Ստեղծվում է քաղաքագիտության վերլուծական կենտրոնը: Այն վարում է կիրառական քաղաքականության հետազոտություն սոցիալական, քաղաքական, և իրավական բնագավառների լայն շրջանակում:

1996 Հանրային առողջապահության վկայագիր շնորհող ծրագիրը ընդլայնվում է՝ վերածվելով լիարժեք հանրային առողջապահության մագիստրոսի ծրագրի, ավելի քան 40 շրջանավարտներ գործուղելով ժամանակակից հանրային առողջապահության և առողջապահական ղեկավարման գործնական ոլորտ:
◆ Սկիզբ է առնում իրավագիտության մագիստրոսի ծրագիրը և աստիճանաբար վերաճում ներկայիս իրավագիտական ֆակուլտետի, որը Իրավագիտության մագիստրոսի կոչում է առաջարկում իրավաբաններին և Համեմատական իրավագիտության մագիստրոսի կոչում՝ ոչ իրավաբաններին: Այս ծրագրերն ուղղված են երկրում օրենքի գերակայության, ներառյալ անկողմնակալ դատարանների կողմից գործադրվող ողջամիտ օրենսդրության վրա հիմնված ժողովրդավարության կայացմանը:
Նույն տարում ստեղծվում է Իրավագիտության ռեսուրսների կենտրոնը որպես իրավագիտության ֆակուլտետի բաղկացուցիչ մաս. այն տրամադրում է ժամանակակից գրքեր և ինտերնետին միացված տեղեկությունների բազաներ, որոնք ընդգրկում են օրենքի վրա հիմնված կառավարման համապատասխան ոլորտները:

1997 Սկսվում է նոր՝ անգլերենը որպես օտար լեզու դասավանդման մագիստրոսի կոչում շնորհող ծրագիրը:

1999 Արդյունաբերական ճարտարագիտության և համակարգերի կառավարման բաժնում առաջարկվում է երկրորդ մասնագիտացում տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում:

2001 Արդյունաբերական ճարտարագիտության և համակարգերի կառավարման դպրոցը համալրվում է ևս մեկ՝ համակարգչի և տեղեկույթի գիտության մագիստրոսի կոչում շնորհող ծրագրով:
◆ Ներկայումս կոչում շնորհող ծրագրերում ընդգրկված ուսանողների թիվը 207 է, իսկ անգլերենի արագացված ուսուցման ծրագրում ընգրկված է ևս 189 ուսանող: Համալսարանի շրջանավարտների թիվը 798 է. նրանց մեծամասնությունը աշխատում է Հայաստանի հանրային և մասնավոր սեկտորի տարբեր կազմակերպություններում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

հոգաբարձուների խորհուրդը և ակադեմիական ծրագրերի ղեկավարները

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ	Միհրան Աղբաբյան, ՀԱՀ-ի պատվավոր նախագահ, Հարավային Կալիֆորնիայի համալսարանի երկրաշարժակայուն ճարտարագիտության պատվավոր պրոֆեսոր Հարություն Արմենյան, ՀԱՀ-ի նախագահ, Ջոնս Հոփքինս համալսարանի Բլումբերգ հանրային առողջապահության բաժնի պրոֆեսոր Էդվարդ Ղազարյան, ՀՀ կրթության և գիտության նախարար Յուրի Սարգսյան, Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի ռեկտոր Ս. Ջաքսոն Քինգ, ՀԱՀԿ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ, Կալիֆորնիայի համալսարանի ուսումնական գծով ռեկտոր և ավագ փոխնախագահ Ուիլյամ Ֆրեյզեր, Կալիֆորնիայի համալսարանի (Բերքլի) ֆիզիկայի պատվավոր պրոֆեսոր, Կալիֆորնիայի համալսարանի ուսումնական գծով պատվավոր փոխնախագահ Լուիզ Սիմոն Մանուկյան, Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ	Դր. Հարություն Արմենյան, նախագահ, ՀԱՀ, դեկան, առողջապահական գիտություններ Դր. Դոնալդ Ֆուլլեր, փոխնախագահ, ՀԱՀ, դասախոսական կազմի դեկան Դր. Թեոնի Քոնդոս, ընդունելության բաժնի տնօրեն Դր. Ռասլլ Քեմբել, դեկան, անգլերեն լեզվի ծրագրեր Տիկին Էլիզա Քեքեջյան, դեկանի տեղակալ, անգլերեն լեզվի ծրագրեր Դր. Ռուբինա Օհանյան, դեկան, գործարար ղեկավարում Դր. Ջուլիա Նյութոն, փոխդեկան, գործարար ղեկավարում Դր. Արմեն Տեր-Կյուրեղյան, դեկան, ճարտարագիտություն Դր. Ատգեն Արմենյան, դեկան, հատուկ դասընթացների բաժին, ուսումնական հարցերի բաժնի տնօրեն Դր. Չարլզ Դանլափ, տնօրեն, շրջակա միջավայրի պահպանման և հետազոտության կենտրոն Դր. Դագլաս Շումավոն, դեկան, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ Դր. Լուսիկ Դանիելյան, փոխդեկան, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ Դրն. Մայքլ Թոմփսոն, փոխտնօրեն, առողջապահական գիտություններ Դր. Ստիվեն Բարնեթ, դեկան, իրավագիտություն Դր. Բարնաբաս Ջոնսոն, փոխդեկան, իրավագիտություն

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԽՈՐԻՆ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՅՏՆՈՒՄ ԻՐ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ Հայաստանի ամերիկյան համալսարանին տարածք, շենք, դրամական օժանդակություն տրամադրելու և համալսարանի հիմնադրմանը մասնակցություն ցուցաբերելու համար:

Հայկական բարեգործական ընդհանուր միությանը՝ Հայաստանի ամերիկյան համալսարանին աշխատանքի ընթացիկ միջոցներ տրամադրելու և համալսարանի հիմնադրմանը մասնակցություն ցուցաբերելու համար:

Կալիֆորնիայի համալսարանին՝ Հայաստանի ամերիկյան համալսարանին գործակցի կոչում շնորհելու և կազմակերպչական օժանդակության համար:

Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալությանը՝ կրթական ծրագրերին աջակցող դրամաշնորհների, ինչպես նաև շինարարության, վերանորոգումների և սարքավորումներ ձեռք բերելու նպատակով միջոցներ տրամադրելու համար:

Ամերիկայի Միացյալ Նահանգների արտգործնախարարության հասարակական դիվանագիտության բաժանմունքին՝ իրավագիտության մագիստրոսի կոչում շնորհող ծրագրի և դասախոսական կազմի համալրման համար միջոցներ տրամադրելու համար:



Շնորհավորում ենք համալսարանի
տասնամյա հոբելյանը